## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Նարեկ,Դավիթ Բեկի 2
Հեռ. 098435745, narekhamaynq@mail.ru , narek.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՄԱՐՏԻ 2018թվականի N 14

## ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Նարեկ համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 13-ի արտահերթ նիստի օրակարգի հետևյալ հարցերը

1. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՋՐՈՍԱՅԳՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ 2018 Թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 02 ՄԱՐՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 13 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ
2. ԱՎԴԻՇՈԵՎ ԱՆԴՐԵՅ
3. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈԲ
4. ՍՄԲԱՏՅԱՆ ԶՈՐԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Նարեկ,Դավիթ Բեկի 2
Հեռ. 098435745, narekhamaynq@mail.ru , narek.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՄԱՐՏԻ 2018թվականի N 15

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՋԲՈՍԱՅԳՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ 2018Թ.ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ և 42-րդ կետերով, հիմք ընդունելով Նարեկ համայնքի ավագանու 20 փետրվարի 2018 թվականի <<Նարեկ համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին>> թիվ 9-Ա որոշումը

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն Նարեկ համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ, ստանալու նպատակով 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրին մասնակցելուն և Արարատի մարզպետարան ներկայացնելու 2018թ. պետական բյուջեի սուբվենցիայի ծրագրային հայտ՝ <<Զբոսայգու կառուցման>> ծրագրի համար:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ
2. ԱՎԴԻՇՈԵՎ ԱՆԴՐԵՅ
3. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈԲ
4. ՍՄԲԱՏՅԱՆ ՋՈՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՀԱԿՈԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նարեկ,Դավիթ Բեկի 2
Հեռ. 098435745, narekhamaynq@mail.ru , narek.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՄԱՐՏԻ 2018թվականի N 16

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հնրապետության օրենքի 18-րդ հոդվաի 31-րդ կետով հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 01.03.2018 թվականի N 38 դրական եզրակացությունը.

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է `

1.Հաստատել Նարեկ համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման՝ արդյունաբերության , ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ պահեստարանների գործառնական նշանակության ( քարտեզագրման սխալի ուղղում) - 0,275 հա (կադաստրային ծածկագիր՝ 0119-0018) վարելահող և համայնքային սեփականություն հանդիսացող 0,21526 հա հողամաս, այդ թվում ՝ 0,14307 հա (կադաստրային ծածկագիր՝ 0119-0018) վարելահող և 0,07219 հա (կադաստրային ծածկագիր՝ 0302-0001) այլ հողամաս :

2. Նարեկ համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,275 հա վարելահող հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 0119-0018) փոխադրել արդյունաբերության , ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ պահեստարանների գործառնական նշանակության.

3. Նարեկ համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում համայնքի սեփականություն հանդիսացող 0,21526 հա, որից 0,14307 հա (կադաստրային ծածկագիր՝ 0119-0018) վարելահող և 0,07219 հա (կադաստրային ծածկագիր՝ 0302-0001) այլ հողամաս փոխադրել արդյունաբերության , ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ պահեստարանների գործառնական նշանակության ( քարտեզագրման սխալի ուղղում):

4. Նարեկ գյուղական համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՄՐՈՅԱՆ ԳՈՌ

2. ԱՎԴԻՇՈԵՎ ԱՆԴՐԵՅ

3. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈԲ

4. ՍՄԲԱՏՅԱՆ ՋՈՐԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ.ՀԱԿՈԲՅԱՆ**